ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2

ք.Երևան «31» 07 2025թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱԼԴԻ Քոնսալթ» և «Շինսերտիֆիկատ» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կատարող), որոնք գործում են համաձայն 18.07.2025 թվականի N 25/1-ՀՔ-ՇՍ համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի, ի դեմս «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊ ընկերության տնօրեն Դ.Հովսեփյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին և պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը և սահմանել ողջամիտ ժամկետ ոչ պատշաճ ծառայությունը պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան (անհատույց) պատշաճ մատուցելու և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքն ու 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը: Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում մատուցված և Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կատարողը ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպմանը, կահավորմանը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը և Պատվիրատուին ներկայացրել գրավոր հավաստում՝ ամենօրյա ռեժիմով կապալառուի կողմից շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման և տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը պահպանած կամ չպահպանված լինելու վերաբերյալ: Ընդ որում հավաստման մեջ մանրամասն ներկայացվում են կանոնները և/կամ նորմերը չպահպանելու փաստը հավաստող հիմքերը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **65700000 (վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանվում է 20000000 (քսան միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գնի մնացած 45700000 (քառասունհինգ միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա **դեկտեմբերի 25**-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական հաշվարկ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է

հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի **0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)** տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի **0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)** տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2, 5.3 և 5.5.1 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5.1 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման,կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման, ինչպես նաև սույն պայմանագրի 3.1 կետում նշված գրավոր հավաստումը չտրամադրելու համար Կատարողի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

	Խախտումը	Պատասխանատվությունը
	Կատարողը չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույտվություն	Տուգանք – պայմանագրային գնի չափով
	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք – պայմանագրային գնի չափով
	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Տուգանք – պայմանագրային գնի չափով

Նշված պարտադիր միջոցառումների (սույն դրույթների տեխնիկական առաջադրանքի 1-3-րդ կետերի) չկատարման պարագայում, մինչև տուգանքի նշանակումը, Պատվիրատուի կողմից կարող է կիրառվել «նախազգուշացում» պատասխանատվության միջոցը, որի կատարման ժամկետը չի կարող գերազանցել 3 օրացուցային օրը: Ընդ որում, «նախազգուշացում»-ից հետո նույն խախտումը առաջին անգամ կրկնվելու կամ «կրկնվող խախտում» արձանագրելու դեպքում երկրորդ անգամ չի կարող կիրառվել «նախազգուշացում» պատասխանատվության միջոցը, ինչի արդյունքում պետք է կիրառվի «տուգանքի նշանակում» պատասխանատվության միջոցը: Նույն միջոցառման շրջանակներում, տուգանքի նշանակումից հետո, երրորդ անգամ «կրկնվող խախտումն» արձանագրելու դեպքում՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է ծառայությունների մատուցման պայմանագիրը:

Կիրառված պատասխանատվության միջոցների՝ այդ թվում «նախազգուշացում» պատասխանատվության միջոցի վերաբերյալ գրառումը կատարվում է շինաշխատանքների ընդհանուր մատյանում:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը

կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված պահանջվող ֆինանսական միջոցների մասով ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը մասնակի լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

7.16 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ը:**

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս	ք.Երևան,Կորյունի 19ա,5-րդ հարկ
ՀՀ ֆինանսների նախարարության	«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ	«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
գործնական վարչություն	հ/հ 220001150832000	հ/հ 1150009355815863
ՀԾ 900011056166	ՀՎՀՀ 08417251	ՀՎՀՀ 01528652
ՀՎՀՀ 02593108		
Վ.Պետրոսյան /_____/	Դ.Հովսեփյան _____	Ա.Վարդանյան /_____/
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 31 » 07 2025 թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	71351540/314	Ընդհանուր պահանջներ. 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի կառուցման իրականացումը՝ անհրաժեշտ որակով և նախագծանախահաշվային փաստաթղթերի, տեխնիկական առանձնահատկությունների և այլ պայմանագրային պահանջների համապատասխան: 2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 10.02. 2025 թ. հաստատված ՀՀՇՆ 13-04-2025թ. և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 3. Տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության հիմնական պարտականություններն են՝ • շինարարության մեկնարկից մինչև ավարտն ընկած ժամանակահատվածում ամենօրյա ռեժիմով ներկայություն ապահովել շինարարական հրապարակում • ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը նախագծանախահաշվային	դրամ	67500000	1	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ծիծեռնակաբերդի խճուղի 2/2 Ալբերտ Ազարյանի մարզադպրոց	Պայմանագիրն ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց, ոչ ուշ քան 01.11.2026թ.

		փաստաթղթերին, շինարարական նորմերին և կարգերին • Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան արձանագրությունը հիմնավորմամբ, այդ թվում՝ ըստ անհրաժեշտության ֆոտո-վիդեո ուղեկցմամբ • ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից • ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, համապատասխան մասնագրերի պահանջների և պայմանագրային մյուս փաստաթղթերի • արգելել կամ փոփոխել այն նյութերի օգտագործումը, որոնք չեն համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերին և անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին • վերահսկել և գնահատել շինարարական աշխատանքների գործընթացը՝ համաձայն պայմանագրով նշված ժամանակացույցի • կատարել որակի ապահովման համար անհրաժեշտ բոլոր փորձարկումները՝ համաձայն Աղյուսակ 1-ի • ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծավալային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումներն իրականացնելու համար • կատարել որակի և քանակի ամենօրյա հսկում (համապատասխան նշում կատարելով մատյանում), Կապալի պայմանագրի իրականացման շրջանակում կատարվող աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները • շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում տեղյակ պահել Պատվիրատուին և առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք չեն խոչընդոտի շինարարության որակի և աշխատանքային ժամանակացույցի վրա • հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինարարական աշխատանքներն անվտանգ իրականացնելու հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության					

		սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար • հսկողություն իրականացնել Կապալառի կողմից ապահովված՝ մոտեցնող ճանապարհների և տեղամասային շինությունների հարակից տարածքների սպասարկումանը ու մաքրությանը • կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը • նյութերի, կատարված աշխատանքների որակի կասկածի դեպքում անցկացնել կրկնակի ստուգում/փորձարկում անկախ փորագիտական լաբորատորիայում (համաձայնեցնելով Պատվիրատուի հետ)՝ ի նկատի ունենաով, որ բացասական արդյունքների ստացման դեպքում փորձարկման ծախսերը հոգում է Կապալառուն • տասնչորս (14) օրացույցային օրվա ընթացքում ներկայացնել կարծիք՝ Աշխատանքային պայմանագրում արված նախնական փոփոխությունների վերաբերյալ • շինարարության ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ամենամսյա հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ: 4. Ամենամսյա հաշվետվությունները պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները՝ • ամենամսյա առաջընթացի մասին հաշվետվություններ տեղամասի համար • հետագա աշխատանքը և սպասվելիք ծախսերը • շինարարական աշխատանքների ուշացումները և դրանց պատճառները • Պատվիրատուի կողմից Կապալառուին ներկայացված պահանջները • տեխնիկական հարցեր՝ փորձարկումների ամփոփում և գնահատական • աշխատանքների ընթացքի լուսանկարներ՝ թվային (մեքենայաընթեռնելի) և պատշաճ որակի • աշխատանքների բնապահպանական պահանջների կատարման վիճակը, այդ թվում՝ տեքստային դիտարկում, վերլուծություն, մեղմացնող միջոցառումների իրականացում, ինչպես նաև՝ լրացված ամսական բնապահպանական մոնիթորինգի ստուգողական թերթիկ ըստ անհրաժեշտության					

		• ծրագրին վերաբերող կարևոր նամակագրության պատճեներ • անհրաժեշտ կատարողական գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները • այլ տեղին հարցեր: 5. Ամենամսյա միջանկյալ հաշվետվությունները պետք է ներառեն նաև իրական և նախատեսված աշխատանքների գրաֆիկական արտացոլում, շինարարության սպասվելիք առաջընթացը և նախատեսվող ծախսերը: 6. Ամսական հաշվետվություններ (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակները) պետք է ներկայացվի հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրվանից ոչ ուշ: 7. Ընթացիկ և ավարտական հաշվետվությունները հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունները հիմնավորող փաստաթղթեր: 8. Ծառայությունների ավարտից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում Խորհրդատուն պետք է ներկայացնի վերջնական հաշվետվություն: Այն պետք է ներառի հետևյալը՝ • ամփոփ ներկայացում շինարարության ընթացքի և ավարտի մասով • լրացուցիչ իրականացված աշխատանքների, և առաջարկությունների մասին տեղեկատվություն կից հիմնավորումներով • շինարարության ընթացքում նախագծերում արված բոլոր փոփոխությունները և դրանց հիմնավորումներ • շինարարությանը վերաբերող հաստատումները և նամակագրության պատճենները • թաքնված աշխատանքների իրականացման ժամանակ կատարված լուսանկարներ՝ ամսաթվերով • ավարտական կատարողական փաստաթղթերի ստուգումը հավաստող եզրակացություն Հատուկ պահանջներ. 9. Բոլոր հաշվետվությունները, տեղեկությունները և նյութերը ներկայացվում են էլեկտրոնային/թվային եղանակով: 10. Տեխնիկական հսկողություն իրականացնողը պետք է ապահովի աշխատանքների մանրամասն պլանավորման և մշտադիտարկման մշտական՝					

		անխափան և առցանց հասանելի թվային /էլեկտրոնային/ հարթակ, ներառյալ՝ փաստաթղթերի և տվյալների հասանելի շտեմարան /ամպային տիրույթում կամ այլ լուծումների միջոցով/: 11 Կատարողը պարտավոր է ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը նախագծանախահաշվային փաստաթղթերին, շինարարական նորմերին և կարգերին համապատասխան: Շինարարական կազմակերպման միջոցառումների և ժամանակացույցի գործընթացի վերաբերյալ հիմք է հանդիսանում Հավելված 6-ով Կապալառուի կողմից ներկայացված Աշխատանքների կազմակերպման ժամանակացույցը և շինարարական հրապարակի կազմակերպման սխեման: Թերությունների վերացման ժամանակաշրջանում Խորհրդատուն պետք է՝ • Ապահովի անհրաժեշտ փորձագետների (թիմի ղեկավար, համապատասխան մասնագետ՝ ըստ աշխատանքների բնույթի) հասանելիությունը շին. հրապարակում: • Բացահայտված թերությունների առկայության դեպքում իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարի տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով: • Բացառապես բոլոր դեպքերում ապահովի համապատասխան փորձագետների պարտադիր ներկայություն շին. հրապարակում՝ ըստ Պատվիրատուի առաջին իսկ պահանջի և համաձայնեցված ժամանակացույցի: • Տրամադրի գրավոր եզրակացություն Պատվիրատուին հայտնաբերված թերությունների վերացման մասին: **Մասնակիցը պետք է ունենա շինարարության որակի տեխնիկական հսկողություն 1-ին դասի գործող լիցենզիա և լիցենզիային կից ներդիր, և համապատասխան մասնագետների հավաստագրեր (ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2106-Ն որոշում) ըստ հետևյալ տեսակների:** - **Բնակելի հասարակական և արտադրական կառույցներ** - **Ջրամատակարարում և ջրահեռացում** **(ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և**					

		արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) Էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) Ջերմագազամատակարարում և օդափոխություն ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) Կապի համակարգեր (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ) Ընդ որում՝ լիցենզիայի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել շինարարական աշխատանքների իրականացման ավարտի և ավարտից հետո հայտնաբերված թերությունների վերացման երաշխիքային սպասարկման ժամկետների հանրագումարից:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900011056166
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

Դ.Հովսեփյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք.Երևան,Կորյունի 19ա,5-րդ հարկ
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Ա.Վարդանյան / _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«31» 07 2025 թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

Աղյուսակ 1
Լաբորատոր փորձարկումների պլան

Հողային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Փորձերի քանակ
Գրունտների խտացման և այլ փորձարկումներ	Ըստ շերտերի	-	22
Երկաթբետոնե աշխատանքներ			
Երկաթբետոնե կոնստրուկցիաներ 0+00 նիշից ցածր			
Բետոնային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 50մ^3 բետոնի ծավալից 10x10x10 կաղապարներ (նմուշառուների քանակ)
Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիքերի տակ	մ^3		1
Շրջանակների միաձույլ ե/բ հիմնային հեծանների պատրաստում	մ^3		2
Միաձույլ ե/բ պատերի պատրաստում	մ^3		2
Ամրանային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20տ խմբաքանակից ըստ տրամագծի
Ամրան Ø 6մմ A240C	տ		1
Ամրան Ø 8մմ A240C	տ		1
Ամրան Ø 8մմ A500C	տ		1
Ամրան Ø 10մմ A500C	տ		1
Ամրան Ø 12մմ A500C	տ		1
Ամրան Ø 14մմ A500C	տ		1
Ամրան Ø 16մմ A500C	տ		1
Ամրան Ø 18մմ A500C	տ		1
Ամրան Ø 22մմ A500C	տ		1
Բետոնային աշխատանքներ 0+00 նիշից բարձր			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20մ^3 բետոնի ծավալից 10x10x10 կաղապարներ (նմուշառուների քանակ)
Ե/բ շրջանակների միաձույլ սյուների պատրաստում	մ^3		1
Ե/բ պարզունակների պատրաստում	մ^3		1
Ե/բ միաձույլ գոտիների պատրաստում	մ^3		1
Ե/բ Գինաֆրամների պատրաստում	մ^3		2
Ե/բ միաձույլ ծածկերի պատրաստում	մ^3		2
Ե/բ հեծանների պատրաստում	մ^3		1
Ե/բ սանդղանների պատրաստում	մ^3		1
Ամրանային աշխատանքներ			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	Նմուշառում յուրաքանչյուր 20տ խմբաքանակից ըստ տրամագծի
Ամրան Ø 6մմ A240C	տ		1

Ամրան Ø 8մմ A240C	տ		1
Ամրան Ø 8մմ A500C	տ		1
Ամրան Ø 10մմ A500C	տ		1
Ամրան Ø 12մմ A500C	տ		1
Ամրան Ø 14մմ A500C	տ		1
Ամրան Ø 16մմ A500C	տ		1
Ամրան Ø 18մմ A500C	տ		1
Ամրան Ø 22մմ A500C	տ		1
Ամրան Ø 25մմ A500C	տ		1
Ամրան Ø 28մմ A500C	տ		1
Բետոնի ամրության ստուգում			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	
Բետոնի ամրության որոշում չքայքայող առաձգական հետադարձի մեթոդով Schmidt Hummer սկլերոմետրի միջոցով	հատ	20	
Եռակցման կարանների տեսողական զննում	գմ	1500	
Եռակցման էլեկտրոդների փորձարկումներ	հատ	5	
Բետոնի ամրության որոշում ե/բ կոնստրուկցիայից հորատած նմուշ գլանի միջոցով	հատ	15	
Մետաղական կոնստրուկցիաների եռակցման կարանների տեխզննում սարքավորումների միջոցով	գմ	500	
Արտաքին հարդարում			
Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ	
Նյութերի ջերմահաղորդականության գործակցի որոշում	ըստ շերտի	1	
Ջերմամեկուսիչ նյութերում օրգանական նյութի պարունակության որոշում	ըստ շերտի	1	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900011056166
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան /_____/
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251

Դ.Հովսեփյան /_____/
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք.Երևան,Կորյունի 19ա,5-րդ հարկ
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652

Ա.Կարդանյան /_____/
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«31» 07 2025 թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽՇՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	71351540/314	Ալբերտ Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոցի նոր մարզաբազայի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ	0	0	0	0	0	0	15000000	15000000	15000000	20000000	20000000	20000000	**20000000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գանձարանական վարչություն
ՀՀ 900011056166
ՀՎՀՀ 02593108
Վ. Պապիկյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
Գեղարքունիքի մարզ, գ.Նորատուս
ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220001150832000
ՀՎՀՀ 08417251
Դ.Հովսեփյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Շինսերտիֆիկատ» ՍՊԸ
ք.Երևան,Կորյունի 19ա,5-րդ հարկ
ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150009355815863
ՀՎՀՀ 01528652
Ա.Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«31» 07 2025թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«31» 07 2025թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
«31» 07 2025 թ. կնքված
ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.11 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. S. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «30» «07» 2025թ.

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Դ. Հովսեփյանի (անձնագիր AT0522708 տրված 006-ի կողմից 14.07.2020թ.), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Երևանի քաղաքապետարանի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.5 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.6 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.7 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.8 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.9 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
ընկերության անվանումը

Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս
ընկերության հասցեն

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220001150832000
ընկերության բանկային հաշվեհամարը

08417251
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Դավիթ Հովսեփյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

Օր/ամիս/տարի

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

1.	**ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***
2. Թիվ	
3.	Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.
4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ**	
5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ**	
6. Վճարողի հաշվի համարը՝ **220001150832000**	
7. Վճարողի ՀՎՀՀ՝ **08417251**	
8. Վճարողի ՀԾՀ՝	
9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ **Երևանի քաղաքապետարան**	
10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)	
11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02593108**	
12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան**	
13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **9300015211429**	
14.Գումարը (թվերով և բառերով)՝ **4570000 (չորս միլիոն հինգ հարյուր յոթանասուն հազար)**	
15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)	
16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ AMD**	
17.Գործարքի (վճարման) նպատակը՝ **(պայմանագրի կատարման ապահովման համար)**	
18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ **ԵՔ-ՀՄԱԽԾՁԲ-25/2**	
19. Վճարման պայմանները՝	<ակցեպտավորված վճարում>
20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ	
22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

30 հուլիսի 2025թ.

Թիվ 059-1123

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 25592355419

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ - «ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍՊԸ կոնսորցիումի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ՀՄԱԽՇՁԲ-25/2» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 2.000.000 (երկու միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 31 մայիսի 2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ grigoryan.diana@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ՀՄԱԽՇՁԲ-25/2» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Կենտրոն» մասնաճյուղի կառավարիչ Գ. Ենգիբարյան

Կատարող՝
Տաթևիկ Մարտիրոսյան
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)